ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

«ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ» ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փամբակ համայնքի սիրելի՛ շրջանավարտներ, մանկավարժական ոլորտի հարգելի՛ ներկայացուցիչներ, շնորհավորում եմ բոլորիդ «Վերջին զանգի» օրվա կապակցությամբ:

Սիրելի՛ շրջանավարտներ, այսօր դուք ճանապարհվում եք դեպի մեծ կյանք՝ դպրոցական նստարանը փոխարինելով նոր հորիզոններով, որ պատրաստ են բացվել ձեր առաջ: Այնտեղ ձեզ սպասում են ընտրության նոր հնարավորություններ, որոնք ճիշտ օգտագործելով կարող եք հասնել նոր նվաճումների կամ ձախողումների:

Ժամանակի արագընթաց հոսքի մեջ մի կորցրեք ձեր մանկական ազնվությունն ու մանր բաներից ուրախանալու կարողությունը, քանզի մեծ կյանքը բաղկացած է փոքր քայլերից:

Սովորեք չհանձնվել փորձություններին, չտրվել մանր հաղթանակներից հետո եկող երանություններին և դասեր քաղել պարտություններից:

Շարունակեք կրթվել, զինվել նոր գիտելիքներով ու փորձով, դարձեք ձեր ընտրած ոլորտներում լավագույնը:

Այն՝ ինչ սովորել եք դպրոցում, և այն՝ ինչը կսովորեցնի կյանքը, ծառայեցրեք ձեր երկրի և ժողովրդի համար, դարձեք օրինավոր քաղաքացիներ:

Շնորհակալություն եմ հայտնում մանկավարժական ոլորտի այն նվիրյալներին, ովքեր ծառայեցրել են իրենց անձը ձեզ կրթելու և դաստիարակելու գործին: Նրանց անմնացորդ նվիրման շնորհիվ է, որ դուք պահպանել եք ձեր դիմագիծը որպես ձեր ժողովրդի զավակ, ձեր մեջ ամբարել մեր ազգային արժեքները:

Բարին ընդ ձեզ, սիրելի շրջանավարտներ:

Թող ձեր բոլոր քայլերը պսակվեն հաղթանակներով և ծառայեն միմիայն բարուն ու լավին:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան